

ԻՆՉՊԵՍ ՏԵՍԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Գ Ր Ե Յ

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

(Շարունակութիւն նախորդ քիւէն)

Երեւանի թանգարանը հարուստ է նաեւ հին դրամներու հաւաքածոներով. պարթեւական, պարսկական, բիւզանդական, հայկական դրամները թիւ չունին: Թանկահարին են եւ հազուադէպ Վիքիկէի հայկական թանգարանութեան դրամները, որոնցմէ շուրջ 300 հատ ունին:

Թանգարանի չէնքը փոքր է եւ ասոնք տակաւին հասարակութեան չեն ցուցադրուած:

Ոչ մէկ հայ կամ օտար այցելու կըրնայ թանգարանը ձգել՝ առանց զգալու հոգեկան մեծ բաւարարութիւն: Այստեղ է հայ ազգը իր անցեալով եւ դարերը կուգան մեզի հետ հաղորդուելու եւ խօսելու: Մարդիկ կու գան ու կ'անցնին, բայց կը մնայ ազգը՝ իր մտաւորական հաստատուն եւ յաւիտեական հիմքերուն վրայ:

Թանգարանի թիկունքին կից կը գտնուի պատկերներու բաժինը: Ոչ ոք պիտի պահանջէ իտալական կամ ֆրանսական թանգարանի մը ճոխութիւնը: Նոր կազմուած է եւ գիւրին չէ մեծ վարպետներու գործեր հաւաքել: Յուցադրուած նկարներու գրեթէ ամբողջութիւնը հայ արդի հեղինակներու գործեր են, մանաւանդ սովետական շրջանի: Սարեանէն մինչեւ նորեկ նկարիչներ հոն իրենց գործերն ունին: Առանձին սրահ մը կը բռնեն Յ. Այվազովսքիի նկարներու խումբ մը: Ասոնք վերջերս փարիզէն գնուեցան. 40 հատ պէտք էին ըլլալ. սակայն ամբողջը Հայաստան չեն հասած, ճամբան մնացեր են՝ ոռոսական այլ թանգարաններու մէջ:

Հայ միջնադարեան նկարներէն նմոյշներ չկան. տնօրէնն ինձ հաւաստեց թէ բաւական ունին եւ նկուղներու մէջ են, տեղ չկայ ցուցադրելու: Ըսաւ թէ ունին նաեւ Ռէմպրանտ եւ այլ դասական հեղինակներ, որոնք շտեմարաններու մէջ կը մնան: Մէկ Ռէմպրանտ՝ ցուցադրուած նկարներէն հազար հատ կ'արժէ, եւ պիտի ըլլար պատկերասրահի փառքը:

Գեղարուեստը հայրենիք եւ ազգ չունի, ոսկիի պէս ամէն կողմ իր յարգն ու արժէքն ունի, եւ պատկերասրահը կըրնար Ռէմպրանտ մը եւ դասական հեղինակներ կախել պատերէն, պատիւ ընելով նաեւ մեր միջնադարեան հեղինակներուն:

Պարսկական գեղեցիկ մզկիթին մէջ, որուն տանիքի յախճապակիները աւելի թանկագին են, քան Երեւան քաղաքի թանգարանը, այցելուն պիտի գտնէ քաղաքին վերաբերեալ հնութիւններ: Ես չկրցայ այցելել, սակայն մզկիթը արդէն թանգարան է, եւ կ'արժէ տեսնել չէնքը միայն:

ԳՊՐՈՅՆԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կ'ըսեն թէ Հայաստանի մէջ անգրագէտ չկայ. ես կը հաւատամ. մեր ժողովուրդը ընթերցասէր է, ուսման փափաքը վառ է անոր սրտին մէջ. ցեղային լաւ յատկութիւն մը՝ որ նոյնն է Հայաստանէն մինչեւ հեռու արտասահման:

Սեպտեմբեր 1ին պաշտօնապէս կը բացուին բոլոր դպրոցներն ու համալսարանները: Փողոցներու մէջ մայրեր, մանուկ-

ներու ձեռքերէն բռնած, դպրոցական առարկաներ կը դնեն. աշխարհի ամէն կողմ նոյնն է. անոնց օժիտը հարուստ եւ ճոխ չէ, տետրակները խեղճ են, դասագրքերը չունին արտասահմանեան գունազեղ արուստ, դէշ տպագրուած են. մանուկի մտքին հետ՝ աչքն ալ պէտք է գոհացնել, որ հաճոյքով սորվի:

Սեպտեմբեր 1ին դպրոցներու առջեւ խնդուած են աշակերտները. անոնք սեւ պլուզ եւ կարմիր փողկապ ունին, մանչ աղջիկ խոռն, խօսուռ, ճոռուղուն, սեւ սալորի պէս խոշոր աչքերով դրաւիչ են, հայու աչքեր են: Քաղաքը կարծես մանուկներու աշխարհ դարձեր է, զուարթ նուրբներու աշխարհ է: Փողոցները լի են կերպարանք առած է: Փողոցները լի են անոնցմով. խումբ խումբ սորվելու կ'երթան, ծաղկալի դարնան կերպարանք տալով Երեւանին: Գրեթէ բոլոր դպրոցները, բարձր եւ ցած, ցերեկօթիկ են. քիչ են գիշերօթիկները եւ ծրագիր ունին առնոց թիւը գէթ 60 հազարի հասցնել եւ աշակերտ ընդունել նաեւ արտասահմանէն 6.000ի չափ:

Կը բացուէին նաեւ համալսարանները: Երեւանի համալսարանը, նախկին անուրբով՝ Մոլոքով, ունի 12 բաժանմունքներ: Շուրջ 3.500 աշակերտներ կը յաճախեն. չեմ կրնար դատել ուսման մակարդակը, բայց ինծի ըսին թէ համայնավար երկիրներու լաւագոյններէն մին է:

Երկու լեզուներով կը դասուանուեն, հայերէն եւ ռուսերէն. չեմ գիտեմ որքան ուսանողներ ուսուական բաժինը կը յառաջնորդեն ուսուական կէս առ կէս: Ունին նաեւ ճախն, թերեւս կէս առ կէս: Ունին նաեւ օտար ցեղերէ աշակերտներ եւ քանի մը հայ ուսանողներ արտասահմանէն:

Բազմաթիւ հայ ուսանողներ կը դադարէին նաեւ դէպի Ռուսիա՝ բարձրագոյն թեւ նաեւ ղէպի Ռուսիա՝ համար. ոմանք կը թուրքիւն ստանալու համար. ոմանք մինչեւ Սիպերիա կը հասնին, ուր աշխատելով իրենց ապրուստը կը ճարեն եւ ուսում կը ստանան:

Համալսարանի եւ այլ բարձրագոյն ուսման հետեւողները պետութեան նըպաստ կը ստանան իրենց դպրոցական տարիին համեմատ. ունին իրենց հասա-

րակաց բնակարանները, զորս Հանրակացարան կը կոչեն, ուր մէկ սենեակի մէջ 4-5 հոգի կը բնակին. դոհ են, վարժած են այդ կեանքին, եւ չեն գիտեր թէ Եւրոպայի մէջ երկու հոգի մէկ սենեակի մէջ տեղաւորելը որքան դժուար է: Միջոց ունեցողները կրնան առանձին սենեակ վարձել քաղաքին մէջ, վճարելով ամիսը 200 ռուպլի: Արտասահմանի ուսանողները աւելի բախտաւոր են՝ պետութեան ստանալով ամսական 900 ռուպլի:

Ճոխ եւ բազմազան են Հայաստանի տարեկան հրատարակութիւնները. լրագիր, ամսաթերթ, գրքեր իրարու ետեւէ լոյս կը տեսնեն: Ամէն հեղինակ կը ջանայ նոր աշխատանք մը տպագրութեան յանձնել. վաստակի ալ աղբիւր է: Պետհրատը՝ որ հրատարակչական տուն է, հեղինակէն կը գնէ աշխատանքը եւ կը յանձնէ զանազան տպարաններու՝ լոյս ընծայելու համար. սակայն ամէն գիրք եւ թերթ պէտք է նախ գրաքննութեան անցնի, ըլլայ բանասիրական, բանաստեղծական կամ գիտական. մասնաւոր քննիչներ կան անոր արժէքն ու գինը ճշտելու համար: Կուսակցութիւնն ալ կը քննէ՝ որ համաձայն ըլլայ երկրի զարգացմանը. երբեմն ստալինեան ուղիով առաջ կ'երթային. այժմ Լենինեան ուղին պիտի շարունակեն:

Պետհրատը վ. Տէրեան փողոցին վրայ սիւնազարդ գեղին հսկայ շէնք մ'է. հոն է տպագրական վարչութեան կեդրոնը: Գեոմոլոգիկին մէջ ունի իր տպարանը թիւ 1: 19 տողաշար կ'աշխատին, բազմաթիւ պաշտօնեաներով. ունին ռվսէթի գործիք մը. սակայն որակաւոր թուղթ չունին, Ռուսիայէն եւ վրաստանէն կը ստանան թուղթը: Հասարակ է իրենց թուղթը, մանաւանդ վրացական արտադրութիւնը. անբաւարար, կարծես մասնաւոր հոտ մը ունին իրենց տպագրութիւնները: Կը խորհիմ թէ իրենք ալ մասնաւոր ճիգ մը կը թափեն գրուածքը կարգաւոր համար: Թէպէտ վրաստանէն հասած թուղթի գլանները, վրացերէն խոշոր տառերով հօրենական անունը կը ցուցնեն, բայց վայ ալն ղժրախտ հայ հեղինակին՝ որ այդ

Բացի հայկական նիւթերէ (Արշակ Բ. կամ Անոյշ), օփերան իր խաղացանկին վրայ ունէր Վերտի, Փուլլինի, Ռոսսինի եւ ռուս հեղինակներ. անշուշտ ռուսերէն լեզուով կը ներկայացնեն, զարմանալի չէ. զարմանալին այն է որ Հայաստանի մէջ քաղաքէ քաղաք հեռագիրը ռուսերէն պէտք է խմբագրուի, դէպի Թիֆլիզ, Մոսկուա զարձեալ ռուսերէն, միայն արտասահման կարելի է հայերէն խմբագրել:

Ես ներկայ եղայ Անոյշին. Անոյշը օփերէթ է եւ ոչ դասական առումով օփերայ մը. մեղի սիրելի է իր հայկական եղանակներով եւ նիւթով, բայց իբրեւ երաժշտութիւն եւ համանուագ՝ դասական ոչինչ ունի եւ ոչ Մասքայնիի Քաւալ-լէրիա ռուսփառնայի մը բարձր յղացքին կը հասնի, մինչ երկուքն ալ գրեթէ նոյն նիւթն ունին:

Հաճելի էր Անոյշի ներկայացումը եւ օփերան գրեթէ լեցուեր էր, կային շատ մը արտասահմանեան հայեր: Սակայն ինչո՞ւ երեւանցին երբ թատրոն կամ օփերայ կ'երթայ, անխնամ կը հագուի, կարծես զործատուն կ'երթայ, նոյնիսկ քաւկէքը գլուխը կը նստի:

Անոյշի դերը կատարեց Հայաստանի սոխակը Գոհարիկ Գասպարեան. ներկայացումը կատարեալ էր. չքեղ հանդերձանքներով, ընտրուած ձայներով ու խմբերգներով կընար ճաշակաւոր ու եւ է ազդի առջեւ ալ մեղի պատիւ բերել: Թումանեան իսկ պիտի զարմանար թէ իր Անոյշը կընար այսքան չքեղութեան հասնիլ:

Իմ քովս նստած էր հայ բարձրաստիճան սպայ մը. պատահական ծանօթութիւնը մեզ խնդրեց եղբայրացուց: Երեւանցին սրտի ժողովուրդ է. նա շատ կը սիրէ իր արտասահմանեան եղբայրները: Շատ առիթներ եղան այդ նուրբ զգացումը վայելելու: Սպան միջնարարին գնաց եւ օփերայի մուտքի անկիւնի գրավաճառէն նորատիպ մատեան մը գնեց. Նարեկն էր. եւ ընծայակա՞նով ինծի նուիրեց: Նարեկը արեւելահայերէնի նոր թարգման-

ուած էր եւ ամէն մարդ հատ մը տուն կը տանէր: Սպան խանդավառ էր այդ մեծ հեղինակով եւ գրեթէ յուզուած ըսաւ.

— Յիշիր ինձ ուր որ գնաս, էս գիրքը բոլոր հայերիս հոգին ու փառքն է:

Օփերային միւս կողմը յատկացուած է երաժշտութեան: Երբորդ անգամ ըլլալով ներկայ եղայ Թաթուլ Ալթունեանի խմբաւորաւորներուն: Վաստակաւոր խմբաւորն արդէն ծանօթ է Հայաստանի եւ մերձաւոր Արեւելքի մէջ: Երանի՜ թէ ըստէս շրջապոստներ կատարէր Կովկասի այլ հայաշատ կեդրոնները. լսեցի անոնց դանդաղ ու փափաքը. զար անցնէր Եւրոպա, վստահ՝ թէ մեծ յաջողութիւն պիտի գտնէ իր պարերով եւ հայկական երգերով: Այնքան լաւ մարդած է իր պարերով խումբը, որ հարկ չի տեսներ ճաշար ձեռքին՝ զայն կառավարելու. անկիւն մը նստած՝ հեռուէն հաղիւ նշաններ կ'ընէ եւ խումբը անթերի կը կատարէ իր պարն ու երգը:

Գծրախոտարար առիթ չեղաւ լսելու Կոմիտաս համբաւաւոր քառեակը, որուն անունը ռուսական սահմանէն ալ անցեր է:

Երեւանի օփերան Հայաստանի փառքն է. շատ աւելի մեծ՝ քան Թիֆլիզի Արթիսթիքը. ժամանակ պիտի դայ որ զայն պճնադարձեն եւ կատարելագործուի Թումանեանի մեծ երգը: Ու եւ է օտարական որ մտնէ այդ մտքի տաճարէն ներս՝ անպայման տպւորուած պիտի ըսէ.

— Անսահման Ռուսաստանի հեռաւոր մէկ ծայրը փոքրիկ ժողովուրդ մը կայ, ափ մը հողով, ժամանակին բարբարոսներէն կոխտուած, ցարերէն լքուած, այսօր իր բոյնը շինած է Արարատի հովանիին տակ եւ հոն դրած է իր մտքի տաճարը:

ԴԵՊԻ ՍԵԻԱՆ

Արմենիա պանդոկին հանրակառքը, ինչպէս ինչպէս Լիբանանի հայ այցելուներով, կտրեց Բարեկամութեան (Երբեմն Բաղրամեան) լայն պողոտան: Անցանք Իսահակեանի տան առջեւէն, ձախին մնաց

Չէքայի շէնքը, աջին Ակադեմիան. ահա դրադէտներու ահումբը եւ բարձունքի վրայ Նոր Արարիկը: Շահումեանի անուան բարձր կամուրջէն յետոյ տակաւին քաղաքի տունները կը շարունակուէին եւ դեռ մղոն մը ճամբայ պէտք էր բաց դաշտ ելլելու համար:

Նեղ եւ կարագատ ճամբան յարատեւ կը բարձրանար: Օդոստոսի վերջերն էր, տակաւին ցորենը չէր հնձուած: Տեղ տեղ հայ գիւղացին բազումներով հողէն դուրս կը քաշէր ժայռեր՝ հող դռնելու եւ մշակելու համար: Մեր ճամբուն վրայ կը հանդիպէին ցանցառ գիւղեր. քիչ մը կանաչութիւն ունէին. տուններ հին, դպրոցական շէնքը նոր. աթարը դիզուած իբր վառելիք. գիւղին մէջ աղբիւր մը եւ հետաքրքիր դէմքեր՝ որ մեզ կը դիտէին: Երբեք անոնք Հայեր էին, Շուշանիկ, Վարդապետ, Ծովիմար կամ Վարդան եւ Արշակ դուռի, Ծովիմար կամ Վարդան եւ Արշակ անուններն ունէին. Ժագ եւ Ժագիկն չկար: Նոյնպէս էին ուրիշ գիւղեր, մէկը միւսին նման. աթար, աղբիւր եւ քանի մը ծառ: 75 մղոն ճամբու երկայնքին՝ ոչ մէկ ծառ իր կանաչ հովանոցը բացած էր կիզիչ արեւուն դիմաց: Ծուրը երկու ժամէն մօտեցանք Սեւանին: Ձախէն մեղի կը մօտենային Գեղամայ լեռները, աջին Սիւրանները. ահա Արագածը սառնանեաց լեռները. ահա մարմարեայ բլուրը: Մեր տանք բաւական մեծ գիւղաւան մը. Սեւան գիւղն էր: Ծամբան երկուքի ճեղքած էր զայն եւ նորակերտ տուններ շարուած էին իր եղբայրներուն:

Եւ հասանք փոքրիկ հրապարակ մը, ուր կը բացուէր Սեւանի երկկտրակալաններու դուռը: Գետնի խորէն խուլ մը ունէին մը կու գար. հեղ Հրապարակը փոքրոտ կը մոնէր եւ մեքենաները կը շարունակէին: Իջանք եւ իջանք շուրջ 110 մեղր խոր:

Հրապարակ աւելի կատաղի դարձած էր եւ պայքարի մէջ էր հսկայ մեքենաները զարձակու համար: Մէկ մասնագէտ կը հսկէր այդ աժդահաններուն վրայ: Ասիկա առաջին երկկտրակալանն էր. չեմ դիտեր դեռ քանիներ իրարու ետեւէ պիտի շար-

ուին մինչեւ Երեւան հասնի այդ ջուրը:

Պէտք էր հպարտանալ այս հսկայ աշխատանքին համար եւ լալ Սեւանի վրայ:

Մասնագէտը շատ ազնիւ կերպով բացատրեց եղած աշխատանքները եւ վաղիք ծրագրերը: Հսկայ մեքենաները Երեւանէն կը կառավարուին, մայրաքաղաքին լոյս տալու եւ գործատուներու զօրութիւն:

Վերելակներով բարձրացանք՝ քիչ մը արեւ տեսնելու եւ Սեւան լիճը վայելելու:

Փոքրիկ զարձուածքէ մը վերջ՝ ահա Սեւանը, Գեղամայ եւ Գեղարքունեաց լեռներու գիրկը տարածուած բամբիջի մը նման: Այնքան վճիռ, այնքան կապոյտ, որ կարծես Աստուծոյ աչքն ըլլար Հայաստանի վրայ: Նայեցանք ու նայեցանք, ո՞վ կը կշտանար անոր գեղեցկութենէն. ո՞վ աչքերը ետ կը զարձնէր գիւթական տեսարանէն:

Հանրակառքը կանգ առաւ քիչ մը վերեւ, ինթուրիստ հիւրանոցին դիմաց:

— Ո՛չ, դէպի վար, դէպի լճին ափերը, կանչեցինք բոլորս:

Այնուակի պէտք չկար՝ կղզին երթալու համար, ջուրն արդէն 17 մեղր իջած էր, եւ հաստ ու գորշ խիճեր կապած էին երբեմնի կղզին ցամաքին հետ: Կղզին կարծես հինաւուրց պառաւի մը գլուխն ըլլար որ գորշ եւ յորդ մազերը ձգած էր ուսերուն:

Իրաւունք ունէր Ա. Իսահակեան ըսելու.

— Մեռնէի՜ Սեւանը ցամաք չտեսնէի, ապրէի՜ Արարատն Հայաստանի մէջ տեսնէի:

Նոյն զգացումն է որ կ'անցնի ամէն հայու սրտէն:

Սեւան լիճ, Սեւան կղզի, հարուստ այնքան պատմական եւ կրօնական տարիներով, որո՞ւ պիտի չչիչեցնէին Աշոտ Երկաթի պատերազմները՝ Դավթէթի ամիրային դէմ, կամ Գէորգ Մարգարէտունի մը յաղթանակներն անոր ափերուն վրայ: Ո՞վ յուզումով պիտի չնայէր Սիւնա եւ Առաքելոց եկեղեցիներուն, որոնք ԺԴ. դարէն մինչեւ հիմա սիւնեցի իշխա-

նուհիւ մը հաւատքն ու արուեստի սէրը կը մարմնացնեն, ցոլքեր առնելով լճակի երեսէն: Հոս՝ այդ կղզիին վրայ տարիններով ճգններ են կրօնաւորներ՝ աղօթքի եւ ուսման խոկումներով, եւ հոս մեծն Մխիթար ստացաւ իր երկնային առաքելութեան պատգամը: Բայց չորս եկեղեցիներէն երկուքը քանդեր են իբր անարժէք չէնքեր, եւ Մխիթարի տեսիլքը մնացեր է երկնքին մէջ:

Կղզիի հարաւային կողմը, ժայռերու վրայ, կը բարձրանայ դրաղէտներու հանգստեան ամարանոցը. սպիտակ գոյն ունի եւ նեղ սանդուղներ. դժուար է անոր վերելքը, վա՛յ անոր որուն ոտքերը կը դայթեն, կրնայ աղիտաբեր ըլլալ: Ա. Իսահակեանի սիրած վայրն էր. զինքը չգտանք, այլ իր տիկինը՝ Սոֆին, որ հաճոյքով մեր խումբին մասնակցեցաւ:

Զբօսաշրջիկներ չկային. հայերը կը նախընտրեն Սոխումի ավերքը: Սոխում տաք կլիմայ ունի, ծառադարձ եւ ժպտուն է. Սեւանի ավերքը լերկ են, ծառ եւ ամարանոցներ չունին. մարդկային ձեռքը դեռ չէ չօգտած՝ արուեստ ու գեղեցկութիւն դնելու, ապա թէ ոչ՝ պիտի ըլլար հազար անգամ աւելի դրաւիչ, նազելի հարսի մը պէս, որուն երեսի քօղը երկնքի թափանցիկ կապոյտն է:

Որքան հանգարտ էր այդ օրը, ավերու լեռներն իսկ հեղ կերպարանք առած էին եւ լիճը կապոյտէն աւելի կապոյտ էր եւ երկնքն անոր մէջ հազար անգամ հայեացած:

Մէկ շոգեմակոյկ երբեմն երբեմն կը սուրար լճակին երեսը՝ հաճոյք պատճառելով անոնց՝ որ մակոյկ չէին տեսած: Միտքս եկաւ Վենետիկը իր անթիւ մակոյկներով, իր նազելադեղ կոնտօլներով. ո՞րքան բանաստեղծական պիտի ըլլային այդ սեւ կարապները այս կապոյտ լճակին վրայ:

Մինակս բարձրացայ թերակղզիին գագաթը, շրջեցայ իր արահետներէն, լճակի երեսէն թերեւս 200 մետր բարձր ըլլալ. կ'ուզէի լճակին մինչեւ հարաւային շրթները աչքերովս համբուրել, բայց լի-

ճը հորիզոնին վրայ կը միանար երկնքին հետ. երկու կապոյտ, մէկ գեղեցկութիւն:

Երկու եկեղեցիները կանգուն էին, դորձ պատերով, մամուսպատ դմբէթներով: Այլ հոն աղօթողներ չատ քիչ են. պետութիւնը միայն հող կը տանի փլուզումէն փրկելու. բայց, Աստուած իմ, ի՞նչ ողբալի վիճակ էր ներսը. պատերը մրոտ, յատակները հող, խորանները փոշեպատ, հինցած լաթեր, աւելի հին տըպազիր պատկերներ չեն կրնար վկայել անոր երբեմնի շքեղութեան, թէ հաւատացեալներ կու գային ճակատին Աստուծոյ առջեւ խոնարհեցնելու եւ իրենց սրտերուն ալիքները հանգարտեցնելու:


Կէսօրին մենք ճաշեցինք Ինթուրիստի պանդոկին մէջ: Սեղանին դարձը եւ անձկանօք սպասուած պնակը Իշխան ձուկն էր: Նա կանչելով ընդունուեցաւ եւ իշխանը բազմեցաւ ամէն մէկ պնակի մէջ: Սպիտակ եւ փափուկ միս ունէր, դրեթէ առանց փուշերու եւ իր համբաւը լիովին կ'արդարացնէր:

Այսպիսի տեղերէ՝ ուր սիրտը խոշոր դեր կը կատարէ, դժուար է շուտով բաժնուիլ. լուսանկարները չեն կրնար հրաշալիքները պատկերացնել: Եւ կ'երթայինք եւ ետ կը նայէինք: Կը փափաքէինք այնքան խոր տպաւորել մեր աչքերուն մէջ լիճը, թերակղզին՝ որ դարեր չկարենան փոշիով պատել, եւ օտարութիւնը՝ սրբել Սեւան լիճը, Սեւան կղզին՝ տարիներու թաշկիւնակով:

ԴԵՊԻ ԱՊԱՐԱՆ

Երկրի մը գլխաւոր փառքը կապուած է անոր յուշարձաններուն հետ: Այն ազդերը որ չունին մտքի եւ հոգիի կոթողներ՝ չունին պատմութիւն եւ բարբարոսներ են:

Երեւանը գեղեցիկ է. բայց մեր հնամեայ եկեղեցիներն անփոխարինելի են: Որքան կ'երազէի որ դար առթիւն այցելելու Հայաստանի պատմական վայրերը. այլ է զրքերու մէջ կարգալ, դրքերով հե-



Ս. Աստուածածին եկեղեցի, ԺԳ. դարէն
(Եղիվարդ գիւղ)

տելի, այլ է իրականութիւնը: Երբեք պիտի չցաւէի Երեւանը կամ Լենինականը չտեսնելու, որքան մեր պատմութիւնը փառաւորող այդ կոթողները, որոնց ամէն մէկուն հետ կապուած է պատմական անձ մը, հերոսական կամ մտաւորական էջ մը:

Մատենադարանի վարչութիւնն ազնիւ դադափարն ունեցաւ մեղ պտոյտի հրաւիրել զէպի Ապարան: Բացի Մատենադարանի դրաղէտներէն, զլիաւոր հիւրն էր Օր. Սիրաբիի Տէր Ներսէսեան, Պ. Յ. Երեւանի մօտ Աւան գիւղէն, յիշեցի Մօ-երեւանի մօտ Աւան գիւղէն, յիշեցի Մօ-երիկ Հայկազն կայսրը, նշանաւոր՝ հայերը ատելու մէջ, որ հոս հակաթոռ կաթողիկոս մը դրաւ Դուինի դէմ Զ. դարուն: Հասանք Եղիվարդ գիւղը. տափարակ հինաւորաց տուններէն վեր կը սրանար Ս. Աստուածածին եկեղեցիին երկնաթիռ դմբէթը: Դրան ճակատին Պոռչեանց գիւնանչանը ԺԳ. դարէն: Եկեղեցիին առեանը բոլորովին քանդուած էր, հազիւ քանի մը սիւններ դեռ վեր կը բռնէին խարխուղ կամարները: Աւագ խորանին վրայ

դեռ կանգուն էր զանգակատան ձեւով բարձրադիր դմբէթը, յարկ յարկի վրայ, նիղակ մը դէպի երկինք ցցուած: Եկեղեցիին պատերը, շրջապատը ծեփուած էին արձանադրութիւններով, որոնք իշխաններու, եպիսկոպոսներու, հաւատացեալներու անանցանելի հաւատքը մեղի կը փոխանցէին:

Երկու մղոն շարունակելով՝ մեր առջեւ պարզուեցաւ կանաչ հովիտ մը. Աշտարակ գիւղը, եւ հեռուն ծառերով պսակուած Օշականը: Ամատունիներու կալուածներն էին: Գինեւէտ է Աշտարակը, բայց իր զաւակները չէին գիտեր Դոդոխեանի սրտառու ծիծեռնակ, ծիծեռնակ կարօտի կանչը: Գիւղին վերեւ բարձրադիր փոքրիկ հրապարակի մը վրայ՝ է. դարէն կանգուն մնացած է փոքրիկ մատուռ մը, շատ փոքրիկ, վարդի չափ, սրտի չափ, կարմիր կտուրով, նազելի հասակով, կարմրաւոր Ս. Աստուածածին եկեղեցին էր: Արձանադրութիւններով լի գերեզմանաքարեր, անուններ եւ անուններ ննջեցեալներուն պաղատանքը կը տա-



Կարմրաւոր Ս. Աստուածածին, Է. դարէն
(Աշտարակ գիւղ)



Ս. Զորաւոր եկեղեցի, Զ. դարէն

նէին Տիրամօր ոտքը: Փոքրիկ մատուռ մը, մինակ, արքայական բուրաստանի մը դարպասին նման: Որքան արտաքուստ սիրուն եւ գրաւիչ, այնքան ներսը մրոտ եւ անխնամ. կարելի էր համբուրելով մաքրել որմերը, եթէ ոսկեզօծ խճաքաբերով չեն ուղեր զարդարել:

Երթալով մենք անցանք Արայի լեռան թիկունքը. ճամբան ոլորուեցաւ դէպի Արազած եւ Արազածը լայն հովիտներով, կարծես բազուկները բացած մեզի եկաւ, չնչեց իր զովարեր քամիները: Ահա բացավայր մը, ուր միտ մինակ կանգնած էր դարձեալ եկեղեցի մը, կիսաւեր, ու չափազանց վիրաւոր. Ս. Զորաւոր կը կոչուի: Զայն կառուցեր է Զ. Դարուն Գրիգոր Մամիկոնեանը: Պէտք էր ժամանակին հրաշակերտ տաճար մը եղած ըլլար. իր քանդակները, խոյակները եւ կիսաւեր աւագ խորանի դմբէթը շատ խօսուն էին եւ գեղեցկութեան ազդակող վկաներ: Ո՞վ գիտէ, քանի՞ չէն էր այս վայրը. քանի՞ Մամիկոնեան բամբիւններ գետակներով ուխտի եկած են հեռաւոր Սասունէն եւ քանի՞ դուռներ շարուած՝ զօրավարներ ընդունելու:

Դեռ աւելի մօտեցանք Արազածին, ահա թրքական գիւղ մը եւ մօտը Սաղմոսավանքը: Խոր ձորի մը մէջէն Քասախ գետը սկսաւ մոնչել: Եկեղեցին կանգուն է, ամբողջական է, բաւ է դռները դնել,

մաքրել եւ սրբազործել՝ հին շարականները հնչեցնելու համար: Գիւղը աղքատիկ է, քիչ հայեր կան. աթարը տուներու կողքին, այգիները իրենց դիմաց, եւ Սաղմոսավանքը, որ ժամանակին մշակութի կեդրոն եղեր է, եւ իր զրազարանն ունէր:

Կէսօրուան դադարէն յետոյ՝ դեռ պէտք էինք այցելել Յովհաննավանքը, որ շատ հեռու էր եւ գմբէթները կ'երեւէին Քասախի ափերուն: Մեր աջին անդունդները կը պատուէին, եւ մութ ձորերէն աւելի խուլ կը լսուէր Քասախ կամ Ազատ գետին աղմուկը: Առասպելը կ'ուզէ որ Տըրդատ թուրքեր բարձրացուցած ըլլայ՝ զայն սանձելու համար, բայց գետը փրկուի եւ կատաղի իր ճամբան բացած եւ հեռացած է, անոր համար զայն Ազատ կոչած են:

Կէս ժամ հաղիւ անցած՝ ինքնաշարժը կանգ առաւ Յովհաննավանքին դիմաց. բարձունքի մը վրայ կառուցուած՝ իր ամբողջ գեղեցկութեամբ կը սլանար անդունդներուն վրայ:

Աւերակ եւ անմարդաբնակ, դադրած են աղօթքներ եւ կոչնակներ. բայց նա տակաւին կը դիմադրէ դարերուն՝ յուսալով օր մը լսել կոչնակին ձայնը:

Այս բոլոր եկեղեցիներուն վրայ պետութեան կողմէն կը հսկէ մասնաւոր ճարտարապետ մը, որ մեզի ընկերացաւ եւ զիտական բացատրութիւններ տուաւ: Բոլոր եկեղեցիները դորշապոյն քարերով շինուած են եւ դարերը տուած են հնարոյր գեղեցկութիւն:

Որքան աւելի պիտի չքեղնային՝ եթէ մարդկային ձեռք մը դանոնք ներսէն ու դուրսէն յարդարէր ճարտար արուեստով: Զի բաւեր միայն կմախքներ ոտքի պահել, պէտք է միտ եւ գոյն տալ, հոգի տալ: Ընդհանրապէս մեր եկեղեցիները ներքին ծեփ չեն ունեցած, վարպետները կը սիրէին քարերը խնամքով յղկել, քանդակել: Քիչեր ունեցած են խճանկար (մոզայիք) կամ որմանկար:

Երբ հասանք Ապարան, Քասախ գետը արդէն առուակներու վերածուած էր, ու

րոնք կը սահէին՝ ցրտասարսուռ ջուրերով՝ տափարակի մը մէջէն: Անոնց քիչ մը վերեւ՝ աննշան մատուռ մը, քահանայ մը եւ քանի մը մարդիկ: Ապարանը ժամանակին Արշակունիներուն ամարանոցն եղած է եւ Ապարանք կը կոչուէր: Արազածոտն դաւառին մէջ, տափարակի մը վերայ է դիւղը. քանի մը նոր տուններ. ճամբուն վրայ Ստալինը կանգնած կը սպասէ մեկնելու: Արդէն Երեւանէն շուրջ 65 մղոն հեռացեր էինք: Մեզ կը հետաքրքրէր Ս. Խաչ եկեղեցին, թերեւս այս շրջաններուն ամենահինը:

Քառակուսի տափարակ կոտորով, 16 դարերու հնութիւնը կողերէն կը թափթըփէր. մեհեան եղած է եւ Լուսաւորիչ սրբաբացուցած, խաչը տնկած, Ս. Խաչ կոչած է: Այժմ չի գործածուիր, ոտքի է. ներսը մի՛ մտնէք, սրտերնիդ կը ցաւի: Ժայռոտ բարձունքի մը վրայ է, եւ անոր թիկունքէն խալոյն կը խորանայ Քասախի անդունդը:

Կարմաւոր Աստուածածին մատուռէն մինչեւ Ս. Խաչ յանձնուած է մասնաւոր ճարտարապետի մը հոգածութեան՝ կործանումէ փրկելու համար: Տարիներ առաջ, զիւղացիները եկեղեցիներուն քառաջ, զիւղացիները եկեղեցիներուն շինելու կը կրէին՝ իրենց տուները շինելու համար. այժմ զիտակեց են եւ նախանձամբ իրենց եկեղեցիներուն, եւ ճարտարապետը կրցեր է անոնց վստահութիւնը շահել, ու զինքը ժամակամ կը կոչեն: Անշուշտ տարիներ առաջ սարսափ ունէին թէ քանդիչ ձեռքեր կրնային իրենց ժամերը կործանել, այժմ ապահով են թէ պետութիւնը պաշտպան է ազգային հնութիւններու:

Զեմ գիտեր քանի անգամ շրջեցանք եկեղեցիին բոլորտիքը, քանի անգամ մեր ձեռքերը չօշափեցին սրբացած քարերը: Ո՞վ գիտէ քանի՞ հնարոյր համբոյրներ դրոշմած են անոր սրբացած որմերուն ու կարծես մեր ձեռքերը կը հպէին անոնց համբոյրներուն:

Հոն հանդիպեցանք տիկին Լիսիցեանին, որ ազգադրական նիւթերով կը զրաղի, հայերէն կը խօսի, ուսերէն կը գրէ:



Ս. Խաչ եկեղեցի, Դ. դարէն (Ապարան գիւղ)

Երեկոյեան ժամը հինգն էր: Արազածէն ցրտազին հով մը վար կը վազէր: Վերադարձին կանգ առինք Յովհաննավանքին բակը: Տիկիններն անգամ մը եւս ուղեցին խորոված դարձնել. գործի լծուեցան. բայց Արազածէն հովը շատ աւելի ցրտազին կը դառնար: Բիւրականը ըստուերներու մէջ էր: Սարսուռ անցաւ մեր ոսկորներէն. հարկ էր խոյս տալ եւ ժամը եօթին ինքնաշարժը սուրաց դէպի Երեւան: Աչքերով հետեւեցայ եկեղեցիներուն, լսեցի Քասախի ազդակները, ու թերեւս վերջին անգամ կը տեսնէի Ազատ գետը եւ անոր թագ ու պսակ եկեղեցիները...:

ԴԵՊԻ ԳԱՌՆԻ ՆԻ ԳԵՂԱՐԴ

Աշտարակ գիւղէն նեղ եւ կարապատ ճամբայ մը կը բաժնուի եւ կը մեկնի դէպի Գեղարդայ լեռները: Քանի մը մղոն անդին, անդունդներուն վրայ եռանկիւն քարաժայռ մը կը ցցուի եւ անոր դադաթին վրայ յղկուած ու քանդակուած քարեր՝ ցրուած են ասդին անդին: Գառնին է: Ամէն մէկ զանգուած ինքն իր մէջ ամբողջութիւն է, բաւական է քովէ քով բերել, իրարու վրայ շարել, հին Գառնին ոտքի պիտի կանգնի նազելի գեղեցկութեամբ:

Յունահռոմէական է անոր արուեստը, թերեւս հին տաճար մը, բերդի մը մէջ բարձրացած: Պ. Կարոյ Ղաֆաղարեան որ առաջնորդեց Պ. Յ. Քիւրտեանն ու զիս, քրմական պաշտամունքով ցոյց տուաւ մէկիկ մէկիկ համրուած եւ թուարկուած քարերը: Հայաստանի հնավայրերու նըւիրուած այս գիտնականը, նախանձախնդիր մասնագէտ, շատ յոյսեր կը ներշնչէ որ աւերակները կամաց կամաց կեանք եւ հոգի առնեն:

Ժողովուրդը զայն Տրդատի քաջութիւնը հաճ է. բայց նա մեհեմէտ էր, հովոց էր, բերդ էր, թէ արքայական աթոռ՝ իշխելու համար խոր ձորերու եւ Գեղարդայ լեռներուն վրայ:

Անշուշտ եղած է բերդ եւ հեթանոսական տաճար: Մեր հետաքրքրութիւնը խանդավառեց յարդելի գիտնականը, որ զբեթէ շօշափելով՝ քար առ քար՝ բացատրեց աւերակներուն գեղարուեստը, յունական ոճով, եւ այնքան տարբեր՝ մեր աւանդական ճարտարապետական արուեստէն:

Խոր ձորերու վրայ երկարող հրուանդանի մը ցցունքին կառուցուած, կ'իշխէ հեռաւորութիւններու վրայ եւ նա մեր փոքրիկ ու գեղեցիկ Ակրոպոլիսն է:

Ծրագիր ունին վերականգնել զայն, քարերը ողջ են, համրուած են. կը մնայ իրարու վրայ բարձրացնել եւ Գառնի

կրկին պիտի իշխէ անդունդներու վրայ: Ինքնաշարժ մեկնեցաւ դէպի Գեղարդ. ութ-տասը մղոն անդին մենք մտանք խոր ձորի մը մէջ: Հեղեղատ մը իր նիւհար ջուրերը վար կը քաշէր, անխելի շրջուկով: Զորին հանդիպակաց կողմը կար միայնակ եկեղեցի մը, դեռ անանուն, անծանօթ: Օձապտոյտ ճամբան դժուարին էջքէ մը վերջ կանգ առաւ փոքրիկ հրապարակի մը առջեւ. ահա Գեղարդը, ըսաւ Պ. Ղաֆաղարեան: Ծակատը եւ կողերը լոյսին մէջն էին, սակայն թիկունքը տուած էր ժայռերուն. եւ ահա ուրիշ եկեղեցիներ, մէկը միւսին մօտ, մէկը միւսին վրայ կամար ձգած, կարծեմ ութ հատ էին, փորուած ժայռերուն մէջ, սիւներ հանած, կամարներ բացած, եւ ժայռէ ամպեր բարդած ձեղունէ ձեղունէ: Տարօրինակ էր, դարձանալի էր. եւ եթէ Պոռչեաններու շինութեան շքեղութիւնն ունենար (ԺԳ. դար), պիտի ըսէին՝ անըման էր: Որքան նուրբ սիւներ, արուեստով խոյակներ, սլացիկ կամարներ իրարու հանդուցուած, եկեղեցի եկեղեցի մէջ կարծես կը ցոլանար: Մայր տաճարի ճակատին դրան վրայ քանդակուած է Պոռչեաններու ղինանշանը. թող ամէն կողմ դնէին, արժանի են ամէն քարի վրայ իրենց անունը դրոշմելու:

Մայր եկեղեցին գործածութեան մէջ է, սակայն ներքապէս նոյն տիւրը պատկերը. ունի մնայուն քահանայ մը եւ մենք տեսանք մկրտութիւն մը, ապա մատաղ եւ թմրուկ զուռնայով պարեր: Կ'ըսեն թէ Երեւանէն շատեր իրենց երեխաները հոս կը բերեն մկրտելու համար:

Արտաքին նեղ սանդուղներէ բարձրացանք վերի եկեղեցիներն այցելելու. մէկուն յատակը միւսին դմբէթն է, մէկուն որմերը՝ միւսին հիմեր: Տարբեր դարձերով քանդակուած, ժայռերը սիւն, պատ եւ խոյակ եղած: Ո՞ր հրեշտակը մղեց Պոռչեանները այս եկեղեցիները կանգնելու, ո՞ր մուսան ներշնչեց վարպետները՝ քարերուն մարմին ու գեղեցկութիւն տալու:

Բագմաթիւ շիրմաքարեր շրջապատած

էին տաճարները. ո՞վ էին, ինչո՞ւ հոն փութացեր են յաւերժութեան դուռը բախելու. անշուշտ վառ հաւատքն ու գեղարուեստի սէրը. դէթ անունով ալ անմահանալու, անմահացած եկեղեցիներու հետ:

Գրեթէ 300 մեղր աւելի վեր կան լայնարերան քարայրներ, հոն է որ ճգնած եւ դրած է Միսիքար աշրիվանցից:

Ո՞րքան փափաքելի պիտի ըլլար որ Հայաստանի շինարար պետութիւնն իր ձեռքերն հոս ալ երկարէր՝ գեղարդեղու եւ նորոգելու համար այս տաճարները, մանաւանդ ներքնամասերը:

Այժմ յանձնուած է Վեհափառին. վըստահ եմ թէ իր եռանդուն եւ արուեստասէր հոգիով պիտի դռնէ մէկը որ սիրտը դնէ եւ Գեղարդը Պոռչեաններու փառքին հասցնէ:

Շրջելով այսքան գեղեցիկ սրբավայրեր, մարդ ստիպուած ամիսոս պիտի ըսէ այս երկրին՝ որ դարերով ենթակայ եղած է ամէնէն վայրագ արշաւանքներու, ապա թէ ոչ՝ Իտալիա մը պիտի ըլլար:

ԴԵՊՈՒԱՐԹՆՈՅ - ԷՋՄԻԱՇԻՆ

Երեւանէն քսան մղոն դէպի Արեւմուտք լայն եւ կարապատ ուղի մը կ'երկարի, մէջտեղ անոր կը հետեւի երկար ածու մը՝ ծաղիկներու համար. Էջմիածին տանող ճամբան է: Ամէն ժամ հանրակառք մը կ'երթեւեկէ: Ծանապարհը կը մեկնի Ստալինի պողոտայի ծայրէն, ապա կը մտնէ Հրադդանի ձորը, կ'անցնի դերման գերիներու շինած կամուրջը ու դուրս կ'ելլէ դաշտեր: Քիչ վերջ Քոնեաքի գործատունը, ապա Միկոյեան օրինակելի կոլխոզը. սակայն իմ հոգիս առինքնող հին սրբավայրերն էին:

Միտին էին Հալէպէն Պ. Սուրէն Գալէնտէրեան եւ տիկինը, Պ. ԲԺ. Ռ. Ժէպէճեան իր տիկնոջ եւ մանչուկին հետ: Մենք արդէն Հալէպէն վաղուց բարեկամներ էինք:

Երկրորդ անգամ էր որ Զուարթնոց կ'այցելէի. բայց այս եղանակ եւ դժբախտ




Գեղարդի վիսափոր եկեղեցին

տաճարն իր աւերակներով մարդս միշտ ծարաւ կը ձգէ: Այցելել, տեսնել անոր հրաշագործ արձիւները, խոյակները, հսկայ սիւներն ու երկնամաս կամարները մեծ բախտ է. յետոյ երեւակայել դմբէթ դմբէթի վրայ, ինչպէս երկինք երկնքի վրայ: Թորամանեանը երազեց անոր վերամբարձ գեղեցկութիւնը, բայց իր երազը պէտք է մարդկային ըլլայ՝ աստուածային հրաշալիքին առջեւ:

Մենք ներս մտանք նեղ եւ հաստ պատերով դռնէ մը. ահա առեանք՝ բոլորածեւ, յղուած սրճագոյն քարերով: Քանի մը փոքրիկներ երանդապնակը գետին դրած նկարչութիւն կը սորվէին եւ անդիտակից կը նայէին այն նրբաքանդակ խոյակներուն, սիւներուն եւ անկեալ կամարներուն, որոնք կարծես տակաւին կը պահէին Ներսէս Շինողին (է. դար) հպարտ աչքերը:

Յուստինիանոս կայսրը Ս. Սովորայի առջեւ դռնեց. Այժմ կը հաւատամ քէ մեծ կայսր մ'եմ. Ներսէս Շինող կրնայ ըսել թէ. Այժմ կը հաւատամ քէ մեծ կաթողիկոս մ'եմ:

Բարեբախտաբար ինկած քարերուն մեծ մասը լաւ վիճակի մէջ է. կարելի է, քիչ մը յաւելումներով, վերականգնել այս հրաշալիքը: Հնագէտներէն ոմանք, մասնաւորապէս Պ. Կ. Ղաֆաղարեան հակա-



Գառնիի աւերակները

ռակ են, վախճանով թէ փոխանակ հին քարերը դործածելու՝ նորեր աղուցանեն. սակայն հսկողութեամբ կարելի է զայն շինել. այսպէս ըրած են Եւրոպայի մէջ բազմաթիւ կործանած աւերակները:

Երկար շրջեցանք մանրամասն տեսնելու համար ամէն զեղեցիկութիւն: Վստահ եմ թէ ոչ ոք պիտի կշտանայ Ն. Շինողին գաղափարներուն հաղորդուելով:

Շարունակեցինք մեր ճամբան դէպի Էջմիածին, փոքրիկ քաղաքին մօտ փոքր բարձունքի մը վրայ իր ամբողջ հասակով

շարական մը յօրինեց Սրբուհիներուն վերայ, հոմերական կտոր մը, որ համանշանազ կը կազմէ այս տաճարին հետ:

Խորանին աջ կողմը, ցած ու նեղ նկուղի մը մէջ, սպիտակ մարմարէ շիրիմ մը կայ. սուրբ Հռիփսիմէի դամբանն է: Չէի կրնար համբուրել, չթմերս պիտի մրոտէին, բայց սիրտս ըսաւ՝ դիր դէթ ձեռքդ վրան և մըմնջէ. Հռիփսիմէ մեծ խորհուրդ եւ անուն ցանկալի: Դամբանին վերայ իւզանկար պատկեր մը կար, բայց անտեսանելի էր: Ո՛վ գիտէ քանի շրթներ



Ս. Հռիփսիմէ եկեղեցի (618 թ.) Էջմիածնի շրջան

և չքեղութեամբ կանգուն էր Ս. Հռիփսիմէն: Կամարածեւ նեղ դռնէ մը կը մըտնենք քաղաքորմին մէջ. նոր սալաշատակուած է, արտասահմանեան բարերարներու ծախքով: Կը պակսին ծառեր, կը պակսի կանաչութիւն և ածուներ՝ զայն շրջանակելու համար մօտակայ ամայութենէն: Եկեղեցին կը մտնենք, երկիւղածութիւն մը մեզ կը պատէ, պէտք էր խոնարհիլ և համբուրել այն ձեռքերը որ զայն կանգնեցին:

Որմերը բաց և յղկուած քարեր են, խորանը նոյնպէս: Ժամանակին ամբողջ տաճարը զարդարուած էր խճանկարներով, այժմ նմոյճն իսկ չկայ: Չայն շինեց Կոմիտաս կաթողիկոսը 618ին և հրաշալի

համբուրեր են, քանի հազարաւոր մոմեր վառեր ու պատերուն փակցուցեր և հիմա եղեր է մութ, ցած, սեւ և անհամբույր: Յիշեցի Հռոմի Ս. Չէշիլիայի դեռնադամբանը, հրաշալիօրէն ընդարձակուած ու զարդարուած, Ս. Աղնէսը՝ ոսկեղէն մողայիքներու մէջ: Ինչո՞ւ մեր Հռիփսիմէն մնար մութին մէջ. ի՞նչ պիտի ըսէր մեզի Կոմիտաս կաթողիկոսը, որ արցունքով լուաց այդ դամբարանը:

Եկեղեցին այժմ յանձնուած է Վեհափառին. դործածութեան մէջ է և նա բարձր ու շինարար գաղափարներով օժտուած է. անպայման Ս. Հռիփսիմէի տաճարը Կոմիտասի օրերուն պիտի դարձնէ:

Կարելի է շատ չքեղ մայրաքաղաքներ

շինել, բայց ոչ Հռիփսիմէ մը՝ դարերը ետ բերելով: Ես երբեք պիտի չփոխեմ այս տաճարը ամբողջ Երեւանի հետ. օտարները չեն յուզուիր Երեւանով, բայց կը խոնարհին այս հրաշալիքին առջեւ:

Որքան տղեղ էր նաեւ զայն շրջապատող քաղաքորմը, պարսկական հողէ պարիսպներ. արարական ցեխէ տուներու կը նմանէին և կը խանդարէին չէնքին տիրապետող զեղեցիկութիւնը:

Հռիփսիմէն Արարատին կը նայի և Արարատն անոր վրայ կը դմայի: Եթէ մեր հողին աղաւնի ըլլար՝ օր մը մէկուն, օր մը միւսին վրայ պիտի հանդէժէ:

Հեռուէն կը տեսնուէին Էջմիածինի դմբէթները. բայց մենք չեղեցանք դէպի աջ և ընդարձակ դերեզմանոցի մը քովէն հասնք երկաթէ ճաղերու առջեւ:

— Ահաւասիկ, Շողակաքը, ըսաւ Պ. Գալէնտէրեան, որ վերանորոգումի բարերարն էր:

Դեղին որմերով և սլացիկ դմբէթով փոքրիկ տաճարը շատ չնորհալի էր, կարծես Հայաստանի մասններուն դրուած՝ ութը երեսով աղամանդ մ'ըլլար: Առանձնացած պարիսպի մը մէջ, ժպտուն ու խորհրդաւոր մեղի կը նայէր իր բոլորակ ու քանդակուած դուռով: Ճարտարապետական համեմատութիւններով, զարդետալ և պարզութեամբ՝ վեհ տպաւորութիւն չի գործեր, բայց վիպական զգայնութիւն մը կու տայ հողիւի: Չարմանալի էր թէ ի՞նչպէս այդ փոքրիկ եկեղեցին մէջ կրցեր են այսքան առատ և նուրբ զարդեր շարել իրարու մօտ: Երբ ներքին նորոգութիւնները վերջանան և քաղաքորմը զարդարուի, խոշոր դեղին վարդի մը պիտի փոխուի՝ կանաչ ածուներու մէջ:

Չեղեցինք Շողակաթը՝ մեկնելու դէպի Էջմիածին. արդէն շատ մօտ էինք, հազիւ երկու մղոն: Մտանք վանքի պարիսպէն ներս: Աջին քաջուած են երկաթէ ճաղեր՝ բաժնելով Գէորգեան ձեմարանը, զոր պետութիւնը դրուած է: Էջմիածնի տաճարը իրր ճարտարապետութիւն չի հաւասարիր Հռիփսիմէի մը կամ Շողակաթի մը, տա-




Շողակաթի եկեղեցին (Էջմիածին)

փակ է և ճնշիչ, աւելի բերդ՝ քան եկեղեցի:

Շարաթ էր, բաւական բազմութիւն լեցուած էր վանքին պարտէզները, մօտակայ պուրակները. ոմանք զրօսանքի եկած էին, ոմանք մատաղ ընելու, ուրիշներ պարելու: Արուեստական լիճը դարձեր էր հասարակաց լողարան, և խայտարկտ բազմութիւն մը աղմկալից կը ծփար անոր ափերուն վրայ: Բարեբախտաբար վանքէն բաժնուած է առանձին պարիսպով, և նեղ դուռ մը թոյլ կու տայ ելք և մուտքի:

Մեր այցելութիւնն համառօտ պիտի ըլլար. չկար վեհափառը. նա տակաւին Ամերիկա կը գտնուէր:

Մայր դրան կողմերուն շարուած էին կաթողիկոսական դամբաններ, աջին սիրուածներ, ձախին անսիրելիներ. ինչ դետողութեամբ դատեր էին՝ չեմ գիտեր: Տաճարին ներսը մեզ աւելի կը հետաքրքրէր: Թերեւս արտասահմանի շատ հայերու երեւակայութեան մէջ հսկայ տաճար մ'ըլլայ՝ ինչպէս Հռոմի Ս. Պետրոսը, Փարիզի Նոթր Դամը. ո՛չ, շատ փոքր



Կիրակի օր մը, Էջմիածնի մէջ

է, յունական խաչի ձեւով եւ թեւէ թեւ հազիւ 20-25 մեղր բացուածք ըլլայ: Նորոգած էին պատերը, եղան արեւնի դոյն՝ թանձր կարմիր քսած, վրան ոսկի դրած՝ կաղամբի տերեւի չափ, ծանր, եւ վանդական, մահու չափ մեղանչելով շնորհալի պարզութեան դէմ: Շատ գիրքեր էին դմբէթը շալկող սիւները, գրեթէ տաճարի ասեանի կէս բաժինը բռնած. մինչ մայր խորանին վրայ խալական ալապատրէ գեղին շրջանակի մը մէջ օգէն կախուած էր Շիրթեանի Տիրամայրը, չափազանց նիւթական եւ ոչինչ խորհրդաւոր. եւ նկարիչը 3-000 տողարով գոհացեր է իրը նուէր: Չէի ուզեր տեսնել այդ աղաղակող շրջանակը եւ ոչ անխօս Աստուածամայր մը:

Այդ գիշեր ես Էջմիածին մնացի. փափաք ունէի մեր նուիրական անցեալին մօտ մնալու: Շարաթ երեկոյեան ժամերգութիւն կար. Լոյս գուարթն երգեց Թիֆլիզի առաջնորդ Կոմիտաս Սրբազանը: Գեղեցիկ էր իր ձայնը, եւ իրաւունք ունէին ձայնին համար երկրորդ Կոմիտաս կոչելու: Որքան նման էին շարականները Ս. Ղազարի երգերուն. ես հիմա կը հաւատամ այն աւանդութեան՝ թէ Մխիթար Արքայապետը հոն սորված եւ վենետիկ փոխադրած է զանոնք:

Տաճարին չորս կողմը, մեծ քառանկիւնի մը շուրջ կը գտնուին վանականներու

բնակարանները. մէկ կողմը մատաղի սենեակները, մութ, ցած եւ միջնադարեան, ուր կը մորթեն դոհերը, յետ երեք անգամ տաճարին շուրջ պտտցնելու, ապա կը խորովեն, կ'ուտեն ու կը պարեն թմբուկ զուռնայով՝ յանուն մեռելներուն եւ իրենց ուրախութեան:

Անոր կից վեհարանը, միայնակ ողբալի կառուցուածքով, ուր կը բնակի վեհափառը, միջնադարեան ճղնաւորի մը զոհողութեամբ, իր տրամադրութեան տակ ունենալով պաշտօնարան մը եւ Ծաղկեայ դահլիճ մը: Անբաւարար են սենեակները, այնպէս որ հարկ եղաւ ես Հայկազուն Սրբազանի փոքրիկ հիւրանոցին մէջ գիշերեմ:

Միաբանութիւնը, բացի վեհափառէն, կազմուած է երեք եպիսկոպոս, հինգ-վեց քահանայ, չորս սարկաւազ եւ շուրջ 25 աշակերտներէ: Անոնք միաբաններ են, ո'չ կրօնաւորներ, եւ իւրաքանչիւրն իր աստիճանին համեմատ՝ ամսական ունի: Վեհափառին թոյլ տրուած է ընդունիլ Հայաստանէն կամ այլ տեղերէ երիտասարդներ, որ քահանայական կոչում ունին, սակայն պէտք է 18 տարեկանը լրացուցած ըլլան եւ աւարտած տասնամեակը (լիսէ): Դժուար թէ կարենան հաշտեցնել Քարլ Մարքսը Քրիստոսի հետ: Առատ կը ցանեն եւ ոչինչ կը հնձեն:

Կիրակի օր Էջմիածնի վանական բակը, արուեստական լիճը, մատաղի սենեակները հոծ բազմութեամբ լեցուցան. հետաքրքիրներ, մատաղի սիրահարներ, աղօթողներ, աղմկողներ, բաղնեւորներ կը կազմէին արեւելեան պաղար մը: Ո՞վ կրնայ արդիւնել որ չխանդարեն սրբավայրի մը նուիրական լուծութիւնը:

Փափաք ունէի այցելել նաեւ Ս. Գայիանէ եկեղեցին որ Էջմիածնէն հազիւ կէս մղոն հեռու է: Տեղացի բարեկամ մը զիս առաջնորդեց, Յակոբ սարկաւազ Պողոսյան, որ ընտանիքով ինծի ծանօթ էր Պէյրութէն: Պարիսպէն դուրս մենք մտանք մեռելական ընդարձակ դաշտի մը մէջ, ուր քառակուսի տափակ դամբանները, մէկը միւսին կից, արմուկ արմուկ

կի, խիտ, դրեթէ անանցանքի եւ այն լի էր ոսկերաւ մարդկան: Հոն էր Առաքել Դավրիթեցիին, մամռապատ քարի մը տակ, անունն հազիւ ընթեռնէի: Ս. Գայիանէի բակն ալ գերեզմանոց էր, եւ նոյնիսկ կաթողիկոսներ թաղուած: Քանի մը ծառեր դրկած էին եկեղեցին, էջր նմաներ Հռիփսիմէի վեհութեան, եւ ոչ անոր պէս բարձրադիր, արեւոտ: Բայց աս ալ սիրուն էր, ճաշակով շինուած, նուրբ դմբէթով եւ սլացիկ սիւներով: Վեհափառը զայն նորոգելու մէջ էր, սիւները, կամարները նոր ոյժ կ'առնէին եւ յատակը կը սալաքարուէր: Ընդարձակ դաշտադէպին մը գիւնքը կը բաժնէ Արարատէն, որ հեռուն միշտ ձիւնապատ, միշտ վեհապանծ, գեղեցիկ խորք մը կը կազմէր:

Սրբուհին թաղուած է աւագ խորանին տակ. մութ եւ մրոտ է նաեւ այդ սրբավայրը: Սեւ մարմարէ դամբան մը պատրաստ էր այդ նկուղին պերճանք տալու, բայց չի բաւեր. սուրբ Գայիանէն իր դամբանը լուսաւոր եւ շքեղ կ'ուզէ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Յ. ՇԻՐԱՊԻ ՀԵՏ

Երեւանի գրագէտ բանաստեղծներուն մէջ ամէնէն ինքնատիպ ու տարօրինակ դէմքը Յովհաննէս Շիրապն է: Իրեն նման աշխարհիս մէջ մէկ հատ չկայ, տերվիշ մը, նոր օրերու Օմար խալիւմ, գինիի փարչը գրկին՝ գինիի եւ երգի սիրահար, Ստալինեան պողոտայի թիւ 23 տան մէջ մինակ կ'ապրի. հէզ պառաւ, չեմ գիտեր թէ իր մա՞յրն է արդեօք, կարող չէ անոր զգեստները կոճկել, կարգ ու կանոն դնել այդ քառասնամեայ մանուկին եւ անոր բնակարանին մէջ:

Ճանչցայ խաչիկ Դաշտենցը, նահապետական մշտի. Սողոմոն Տարօնացին՝ սովետական մշտի, բայց Շիրապ իսկական լենինականցի է. անոնք կեանքին վրայ կը նային անհոգ ուրախութեամբ եւ թափթրիւմ իմաստասիրութեամբ, կարող են կաղ էշով հարսանիք երթալ եւ հեղինակել գեղեցիկ երգեր ու քերթուածներ:

Շիրապն այս տպաւորութիւնը ձգեց վերաս. յետ երեք անգամ իր տունը երթալու փնտռելու, ժամադրութիւններու, գտայ կէս մը խմած. հայկական խաղողի ողկոյց մը ձեռքը, դուռը բացաւ եւ ըսաւ. — Կեր, ասիկա հայկական խաղող է: Նա հարցուց թէ ո՞վ ես, ուսկի՞ց կու գաս, ի՞նչ կ'ուզես. խորհեցայ թէ յարմար չէր ոչ գինքն աղաղէս տեսնել եւ ոչ բանաստեղծութեան վրայ խօսիլ:

Դարձեալ ժամադրութիւն յաջորդ օրը. բայց նա մոռցեր էր եւ շարաթով Լենինական գնաց: Լենինականցիներուն համար ժամանակը նշանակութիւն չունի, ժամադրութիւնը իրենց բնութեան մէջ չկայ:

Երբորդ անգամին Շիրապ իր տունն էր, շատ քիչ խմած էր Կովկաս ճաշարանին մէջ, որուն մնայուն յաճախորդն է: Ի՞նչ ընէ խեղճը, որո՞ւն պատմէ իր ցաւը՝ երբ Սիրվա Կապուտիկեանն ու իր սիրելի Արայիկը հեռու են տունէն. որո՞ւն պատմէ՞ գինիէն զատ՝ իր ցաւը:

— Հ. Վահան Յովհաննէսեանն եմ, ըսի:
— Հա, լսեր եմ, դուն բանաստեղծութիւններ գրած ես, դէ քանի մը հատ արտասանէ որ լսեմ, պատասխանեց:

— Ներեցէք, ըսի, ես գրածներս չեմ յիշեր:

Ինքն իր քերթուածներէն տողեր արտասանեց. յանկարծ միտքս ինկաւ.

Եթէ երբեք փողոցին մէջ հանդիպիմ Մերկ լակոտի մը սեւ, խոշոր աչքերով...

Շիրապ ինքը շարունակեց այդ իմ գրածս:

— Էս քերթուածը դո՞ւն գրեր ես, հարցուց:

— Այո՛, ես գրեր եմ, պատասխանեցի:

— Շատ լաւն է, ըսաւ եւ գրկեց ու համբուրեց: Ապա վերցուց դարակէն իր քնար Հայաստանի վերջին հրատարակութիւնը ու պարապ էջի մը վրայ, մեծատառ, անկեղծ գեղադրութեամբ ընծայական մը խմբագրեց:

Հայր վահան Յովհաննէսեանին բանաստեղծին բանաստեղծից,

Ուր էլ գրնաս՝
պաշտիր անհաս
մեր հայկազուն
հայոց լեզուն.
որ մշտավէս
Մասիսի պէս
ընդգէմ ձուլման
ահ ու մահի
մեզ յաւիտեան
Հայ պիտ՝ պահի:

Յովհաննէս Շիրազ

1960 թ. Երեւան, 7 Սեպտ.

Ես գնում եմ, ըսաւ, եւ մեզմէ առաջ
տունէն դուրս ելաւ. չգարմացայ այս
յանկարծուստ ոստումին վրայ. երեւան-
ցին քեզի պիտի ըսէ թէ Շիրազն է, մի՛
զարմանար:

Իր տարօրինակութիւններն ալ իրենց
մէջ դրաւիչ բան մ'ունին եւ հայ ժողո-
վուրդը կը սիրէ այդ Լենինականի գաւա-
կը. կեանքով հին աշուղ, քնարով մեր օ-
րերու զգայուն եւ հայրենասէր բանաս-
տեղծ, որուն քնարը կը թրթռայ հայրե-
նիքի սիրով եւ ըմբոստ է ամէն կաշկան-
դումի դէմ...

Ամենասուրբ Հայոց լեզուն,

մէկ էլ Մասիս սարն է հոգիս,
Մի աչքին լոյս, մի աչքն արցունք
իմ Հայաստան եսին է հոգիս:

Ի՞նչպէս կոչեմ քեզ Հայաստան
երբ Արարատ սարը չունես,
երբ դժբախտ Անին, Ղարս, Արտաշան
եւ Էրզրում, Վանը չունես:
Երբ նոր խօսող մանկան շուրթին
Հայոց լեզուի բառը չունես:
Ի՞նչպէս կոչեմ քեզ Հայաստան
երբ դու Մասիս սարը չունես:

Ինձի համար ամէնէն աւելի հաճելի
հանդիպումն եղաւ. Երեւանի մէջ շատեր
տեսայ, սրտազեղ ձեռքեր սեղմեցի, բայց
Շիրազ իր տերվիչի կերպարանքով, թափ-
թբաժն արտաքինով, տաղանդի լոյս մը
ունէր իր մէջ որ զինքն աւելի սիրելի պի-
տի դարձնէ՝ երբ Անիի վրայ գրած երկա-
րաշունչ ու զեղեցիկ քերթումն հրատա-
րակուի:

ՎԵՀԱՓԱՌԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Երկու շաբաթէն աւելի էր որ Վեհա-
փառի վերադարձին կը սպասէին Միաբա-
նութիւնն ու Երեւանը: Ինչո՞ւ կ'ուշա-
նար, ոչ ոք չէր տեսնուի, տարօրինակ լուրեր
չընկերան. հիւանդ երեւակայութիւններու
ծնունդ էին այդ լուրերը, անշուշտ կա-
րեւոր հարցեր ունէր լուծելիք, որ մեր
զինուորու բանը էր:

Հոկտեմբեր 2ին Երեւանի սաւառնակա-
յան իջաւ Վեհափառը. բազմութիւն մը
տեղացիներու եւ եկուոր Հայերու զինքը
զինուորեցին: Նա իջաւ հին եւ փոքր
սաւառնակայանը. նոր եւ մեծ կայանը
պատրաստ էր: Երեւան Մոսկուայի կապ-
ուած էր Թիֆլիզի յօժարութեամբ. բայց
այժմ միաթռիչները (ձէթ) ուղղակի
Մոսկուա-Երեւան կը հասնին, վերէն բա-
րեւ տալով Թիֆլիզին:

Ինքնաշարժներու երկար շարք մը հե-
տեւեցաւ Վեհափառ Կաթողիկոսին եւ
վանքի բակին մէջ կազմեցին եկեղեցա-
կան թափօրը. պիտի անցնէր դալար ձիւ-
ղերով կամարի մը տակէն՝ կարգալով
Բարի գալուստ Վեհափառին: Ժողովուր-
դը խոնուած էր, մեծ մասով ներգաղ-
թողներ, որոնք կը համբուրէին շուրջառի
քղանցքները եւ օրհնութիւն կը խնդրէին:

Վեհափառի մէջ նա առաջին ճառն ար-
տասանեց յայտնելով իր գոհունակութիւ-
նը՝ արտասահմանեան ընդունելութիւն-
ներուն համար: 100.000 հոգի իր Աջն
համբուրեր են, հայրենիքի կարօտն առեր:
Ներկայ էր կրօնի նախարարութեան բար-
ձր պաշտօնեայ մը եւ Վեհափառը շեշ-
տեց թէ Էջմիածինի հաւասար Հայաս-
տանն ալ մեծ օգուտ կը քաղէ դէպի ար-
տասահման այս այցելութիւններէն:

Բայց շատ աւելի հանդիսաւոր օր եղաւ
Հոկտեմբեր 8ի Կիրակին: Վեհափառի դա-
հակալութեան հինգերորդ տարեդարձը
պիտի կատարուէր: Երոստաղէմի միաբան
եւ աշակերտներու տնօրէն Հայկազուն
Սրբազանը ձայնաւոր պատարագն ըրաւ.
երգչախումբը երկսեռ, վճարովի, բաւա-
կան յաջող երգեց. բայց արտասահման

շատ աւելի լաւ երգչախումբեր կան՝ ա-
ռանց դրամի: Եկեղեցին երթեկեկի վայր
էր. երգ, պատարագ եւ շարժում խառնը-
ւած էին: Մասնաւոր թափօրով պատա-
րագի կէսին տաճար իջաւ եւ Վեհափառը:
Ոսկեայ ասղնեղործ շուրջառը կը շողջո-
ղար լոյսերու տակ եւ վեղարի աղամանդէ
խաչը ցոլեց կ'առնէր:

Մասնաւոր հրաւերով 180 հոգի ճաշի
մնացին: Պ. Սարգիս Գասպարեան եւ օգ-
նականը՝ Յովհաննէսեան, իբր կրօնի
պաշտօնեաներ, Սրբազաններ, ճարտարա-
պետներ եւ արտասահմանեան այցելու-
ներ: Կովկասի եւ Հայաստանի մէջ սովոր-
ութիւն ունին ճաշերը երկար ճառերով
համեմել: Եղած է երբեմն որ ես 10 ժամ
ճաշի նստիմ: Պ. Ղարիպեան օրուան քա-
մաքան էր: Խօսք առին ասղին, խօսք ա-
ռին անղին, եւ եղեւ երեք ժամ: Ծաշերը
պատրաստած էր Վեհափառի մայրիկը,
մէջը զնելով ճաշակի հետ՝ ներութիւն
ճառալուծեան: Վեհափառը քանի մը ան-
գամ ստիպուեցաւ պատասխանել, բայց
իր սրտաբուխ խօսքերը պահեց Վեհափառի
Միաբանութեանը՝ ինձի պատասխանե-
լով: Նա իր սրտին մէջ վառ պահած էր
Վեհափառի այցելութեան օրերը, եւ սերտ
էր իր բարեկամութիւնը այդ դարաւոր
Հայաստանութեան հետ. Ալիշան Վեհափառի
էր, Խրիմեան Էջմիածնի մէջ, երկու լու-
սաւոր դէմքեր, հայրենիքի նուիրուած
ջերմօրէն:

Վաղդէն Ա. ո'չ միայն հայ պետութեան
եւ Մոսկուայի առջեւ մասնաւոր յարգանք
ու սէր կը վայելէ, այլ շահած է նաեւ
հաւատարմութիւն խոր պաշտամունքը
իր ազնիւ, հայրական եւ փութկոտ հոգա-
ծութեամբ: Ուղղակի իր հսկողութեան
տակն են Միաբանութեան բոլոր գործե-
րը. պետ է, մատակարար է, դաստիա-
րակ է, հիւրընկալ է: Իր թեւերուն տակ
առած է առօրեայ կեանքի հոգը: Քիչ են
օգնականները, յոյս ունի նորեկներու վը-
րայ:

Երկրորդ օրը ես գնացի մնաք բարովի:
Երէկ զանգակները խառնուած էին բազ-
մութեան ժխորին. անոնց ձայնը գրեթէ

անլսելի էր. այսօր երեքն ալ մանկական
ձայներով կը հնչէին, չեմ կարծեր թէ
վանքի բակէն անցնին անղին. իսկ Արա-
րատն ի՞նչպէս լսէ եւ միանայ սրբավայ-
րի աղօթքներուն: Յիշեցի վեհափառի
զանգակներուն հրաշալի երաժշտութիւնը,
որոնք երկինքը յուզումով կը լեցնեն: Ին-
չո՞ւ չեղաւ մէկը որ հոն ալ կախէր մեր
երկնքէն քանի մը խոշոր եւ քաղցրահն-
չիւն զանգեր:

Ժամերգութեան նոր կ'ելլէին: Բար-
ձրացայ Վեհափառը: Մեր հանդիպումը
պաշտօնական ոչինչ ունէր, բարեկամա-
կան եւ մտերիմ էր: Վեհափառը անձամբ
առաջնորդեց Մանթաշեանի շինած նոր
վեհափառն այցելելու: Քառասուն տարի-
ներ առաջ դրաւուած եւ զինուորանոց ե-
ղած էր. հոն ուր աշխարհի զինուորները
կը մտնէն՝ աւերակով դուրս կ'ելլէին:
Շէնքը հսկայ է, առատ մեծ դահլիճնե-
րով, սակայն ծանր եւ յաղթանդամ ճար-
տարապետութիւն, տեղը պարոփոյ մը եւ
երեք միլիոն ռուպլի պէտք է զայն վերա-
նորոգելու համար:

Արդէն խնդրանք եղած է Մոսկուայի՝
որ Հայաստանի սեւ մարմարներէն տրա-
մադրուի դահլիճներու յատակները շինե-
լու: Երբ իր հանդերձանքներն ունենայ՝
ներկայանալի վեհափառն մը պիտի ըլլայ:

Վեհափառի հրամանով Յուսիկ վարդա-
պետն ու Յակոբ սարկաւազը զիս առաջ-
նորդեցին եկեղեցական դանձերը տեսնե-
լու: Տաճարի աւագ խորանի ետեւ, սե-
նեակներու մէջ էին: Հին շուրջառներ,
վարդոյցներ, սկիհներ ու խաչեր, մէկը
միւսէն շքեղ ու թանկագին, ճոխ հարըս-
տութիւն մը կը կազմէին: Կար նաեւ Ա-
շոտ Երկաթի երկաթէ մեծ խաչը, եթէ ի-
րական է:

Դժբախտաբար յարմար տեղ չունին, ի-
րարու վրայ խճողուած են. եթէ շինուէր
նոր թանգարան մը՝ պիտի ստանային ի-
րենց ճաշակաւոր սարքումն ու գեղեցկու-
թիւնը:

Շատ իրեկէսներ պատերէն անպաշտ-
պան կախուէր էին, եւ բախ թէ ժամանա-
կին աւելի հարուստ է եղեր ու նուազեր

են, եւ թէ նոյնիսկ վերջերս ալ թանկագին շուրջառ մը իր սարքով անյայտացեր է:

Իջանք նաեւ մայր խորանի տակը, զոր նոր բացած էին, դարմանալի յայտնութիւն մը լոյսին բերելով. ատրուչան մը, կաւէ խոշոր ծափ մը, մէջը լի մոխիրով: Ո՞վ կրնայ լուծել այդ հանելուկը: Ս. Լուսաւորչի՞ չըջանէն, թէ Վարդանանց դարուն կրակի պաշտամունք եղած է: Կրակարանի չորս կողմի յատակը չինուած էր մոզայիքներով, որոնք այժմ քանդուած են եւ հատիկները Երեւան փոխադրուած: Բայց ատրուչանի հանելուկը դեռ կը մնայ:

Էջմիածինի մէջ Կաթողիկոսի նախաձեռնութեամբ սկսեր են կազմել ձեռագիրներու նոր հաւաքածոյ մը. առ այժմ 190 կտոր ունին, ոչ այնքան հին եւ փրկուած, սակայն յոյս կայ կարելի եղածին չափ ճոխացնել:

Հրաժեշտի պահուն, Վահագնաւոր ազնիւ ու սիրալիք վերաբերմունքով դէպի Ս. Ղազար՝ արծաթագործ գեղեցիկ ափսէ մը նուիրեց վանքին, եւ հատ մ'ալ ինծի, իր անմոռաց յիշատակ Ս. Լուսաւորչի սրբավայրէն եւ իր մեծ համակրանքէն:

Ինքնաշարժը սուրալով կտրեց անցաւ վանքի բակը, պարիսպներէն դուրս ելաւ եւ բռնեց Երեւանի ճամբան: Չեմ գիտեր քանի անգամ ետ նայեցայ՝ անգամ մ'ալ տեսնելու դժբախտութեամբ, որոնք այնքան օրօրած են Հայութեան երազները:

ԴԵՊԻ ՕՇԱԿԱՆ

Կարելի՞ էր հեռանալ Հայաստանէն առանց Օշականը տեսնելու: Ծով երթալ, ծարաւ դառնալ պիտի ըլլար: Ու փափաքը զիս կ'այրէր Օշականը տեսնել: Այդ հաճոյքը պատճառեց ձայնասփիւռի եռանդուն աշխատաւորներէն մին՝ Պ. Արմէն Խսկոյեան, շատ հայասէր եւ հաւատացեալ համայնավար: Նա բերաւ երկու բարեկամներով ինքնաշարժ եւ խորոված:

Երեւանցիքն առանց խորովածի զբօսանքի չ'երթար: Դարձեալ պէտք էինք Աշ-

տարակ գիւղն երթալ եւ ապա ձախին դառնալով՝ մտնել այգեւէտ հովիտի մը մէջ: Երկրորդական ճամբայ մը, ծառադարձ, յանկարծ կանգ առաւ ցած եւ աղքատիկ տուններով գիւղակի մը մէջ: Օշական: Ի՞նչ բախտաւոր գիւղ, որքան համեստ՝ այնքան անուանի: Եթէ անոր բնակիչները գիտնային թէ տարին քանի հազար անգամ կը կրկնենք իր անունը, ալ պիտի չ'նախանձէին Երեւանին:

Գիւղին վերեւ բաւական մեծակալ հրապարակ մը, մէջտեղը 1875ին շինուած եկեղեցի մը: Ոչ մէկ գեղեցիկութիւն, ոչ մէկ գրաւիչ բան ու սլացիկ դմբէթ: Սաղաձեւ եւ աղքատ մտքի արարած: Ներսը ճերմակ բռնած որմեր, ձմեռնային պաղ լուսնակի պէս:

Եկեղեցիի ներքնամասը շինութեան մէջ էր. կարմիր չեչաքարով կը սալադաստակէին:

— Ո՞ւր է սուրբին դամբարանը, հարցուցի տեղացի ուսուցչի մը, որ մեղի ընկերացաւ:

Աւագ խորանի ձախակողմեան աւանդատան մէջէն նեղ գետնափոր տեղ մը մտանք եւ չմտանք. մութ էր, մոմ վառեցինք, յատակին վրայ տարածուած էր կրանիւթ դամբարանը, որուն վրայ յետոյ մարմար պիտի ձգէին: Որքան կը փափաքէի որ հրաշքով այդ նկուղը ընդարձակուէր, լուսաւորուէր մեր հաւատքին պէս. գէթ հրեշտակն իջնէր եւ Ս. Մեսրոպի տրտում աչքերը սրբէր, սրտին փուշը հանէր, քովը ճրագ մը վառէր եւ դարձեալ գէշ իր հրեղէն մատներով ոսկի Ա, Բ, Գ: Նա մեր աղգային գոյութեան ոսկեղէն չէնք բարձրացուց. իսկ մենք զինքը այստեղ մութին մէջ բանտեր ենք: Ի՞նչ պիտի ըսէր օտարական այցելու մը. ա՞յս է ձեր պաշտամունքը այդ մտքի փարոսին հանդէպ: Վրաստան Թիֆլիզի մէջ լաւագոյն պողոտան՝ անանուն Ծոքա Ռուստավելիի մը նուիրեր է, իսկ Երեւան զինքն աքսորեր է Նոր Արաբկիրի կողմերը՝ քարոտ ճամբու մը վրայ: Ինչո՞ւ Ստալինը Վրաստան չ'ըրկել եւ անոր պողոտան Ս. Մաշթոցին չ'տալ, երբ այդ պողոտային վրայ

կ'իշխէ մեր մտքի տաճարը՝ Մատենադարանը:

Վաստահ եմ թէ Հայաստանի մէջ ալ հաղարներ այսպէս կը խորհին, հաղարներ կը սպասեն որ Զուկաշվիլին վար իջնէ 40 մեզր պատուանդանէն եւ անոր տեղ Մաշթոցը կանգնի, ոսկեղէն տառերը ձեռքին, մանաւանդ սրտին վրայ, եւ իշխէ Արարատին, Արարատէն անդին՝ բովանդակ Հայութեան վրայ:

Օշական իր այգիներով ժամանակին Ամատունիներուն կալուածն էր: Վահան Ամատունի Սուրբ Մեսրոպի սիրելի բարեկամն էր. ո՞վ գիտէ, քանի անգամներ սուրբն եկած է այս կողմերը՝ Աշտարակի ոսկի խաղողն ուտելու եւ խորոված դարձնելու: Ամատունի տանուտէրը անոր մահէն վերջն ալ ուղեց իր քովն ունենալ. իր կալուածներուն մէջ չ'ինեց դամբարան. յետոյ կտակ ըրաւ որ զինքն ալ Մեսրոպի դամբարանէն 40 կանգուն հեռու թաղեն, ոչ քովի կը. ինքզինքը արժանի էր համարեր. միայն թէ լսէր անոր հեղամունքը աղօթքները: Յետոյ մարդիկ մոռցան իր կտակը, դամբարանը քսան կանգուն սուրբին մօտեցուցին, իր ոսկորներուն վրայ դասարան շինեցին. տե՞ղ կը պակսէր, որ տղաք կոփեն, աղմկեն եւ խանդարեն իր հանդիստ նինջը:

Եկեղեցին թէպէտ Վահագնաւոր հսկողութեան տակն էր, սակայն եւ հոն քահանայ չ'ուսայ. չեմ գիտեր թէ հոն պաշտամունք կը կատարուի: Ուսկի՞ց զբոսնեն այդ բաղամթիւ եկեղեցիներուն համար քահանայ:

ՈՍԿԵՂԵՆ ԱՇՈՒՆ

Հայաստան երկու գեղեցիկ եղանակներ ունի. անոր դարունը եւ աշունը հիանալի են: Կեռասն ու դեղձը, կարմրաթուշ ծիրանը դարձան դարդերն են: Հովերը անոյշ, դաշտերը զմրուխտէ, լեռները տակաւին սպիտակ: Դաշտ ու հովիտ բուրեան ծաղիկներով կը լեցուին ու կարծես հին դրախտը կը կենդանանայ:

Երեւան ամառը կիզիչ կլիմայ ունի, տանիքներու վրայ գիշերելն իսկ չի փր-

կեր ջերմ օդին փայփայումներէն. բարեբախտաբար աշխարհիս լաւագոյն ջուր ունեցող քաղաքներէն է, զով եւ առողջարար, հիւանդը պէտք չկայ որ դեղ առնէ, ջերմոտը՝ փնին կամ ասպիրին. իրենց ունեցածէն աւելի կենդանարար է Երեւանի ջուրը:

Բայց Սեպտեմբերի աշունը ոչ Թիֆլիզ ունի, ոչ Մոսկուա, ոչ ալ Ամերիկացիք կրնան տոլարով գնել: Ոսկի խաղողը կը հասնի, միրգերը կը կարմրին: Էջմիածինէն, Հոկտեմբերեանէն, Աշտարակէն ու Դուինէն խաղողը կը հոսի դէպի Երեւան, թափանցիկ, քաղցրահամ, ոսկի եւ սեւ սաթ, շուրջ 30 տեսակներ, որոնք Արարատ գործատան մէջ՝ Նուստալ, Աշտարակ, Դուին կամ Յոքելեան քոնեաք պիտի ըլլան, կամ Ոսկեվազ գինի: Արդէն գործատուները կ'աշխատին նոր գինի, նոր կեանք պատրաստելու համար:

Համայնավար երկիրներու մէջ ամէն տարի ոսկի աշունը կը տօնեն, այդ տարի Երեւանի կարգն էր: Մարդագաշտը լեցուած էր հանդիսականներով եւ դեռ ուրիշներ ամէն միջոց դառն՝ կը փութային տեղ ճարելու: Ծուրջ 30.000 արդէն լեցուցած էին դաշտը:

Մոսկուայէն եկած էին արուեստի ոռոս նշանաւոր դէմքեր, շարժանկարի աստղեր, կրկեսի միմոսներ, թատրոնի եւ երգի հռչակաւոր դէմքեր: Մարդագաշտի (ստատ) մէջտեղ դրած էին բարձր պատուանդան մը. ամէն մասնագէտ վրան բարձրանալով՝ ինքզինքը ցոյց կու տար ամբոխին, իր մասնագիտութենէն կտոր մը կը ներկայացնէր եւ ծափերով կը հեռանար: Դժբախտաբար ամէն ինչ ոռոսներէն էր, կարծես Մոսկուայի մէջ էինք. մէկ կամ երկու հայ արուեստագէտ խօսեցան մեր լեզուով: Ի՞նչ հասկնայի եւ ի՞նչպէս իրենց պէս աժան գինիներով խելայեղ ծափահարէի, երբ խօսնակն իսկ ոռոսներէն կը յայտարարէր:

Կատարեցին կենդանի պատկերներ, եկան քանի մը ձիաւորներ՝ առաջին կարմիր բանակայիններու յաղթանակները պատկերացնելու համար: Բայց հաճելի

էր մեզի համար տեսնել 30-000 հայեր իրարու քով. մենք երբեմն օտար խոշոր քաղաքներու մէջ ճրագով կը փնտռենք մեր ազգակիցները: Հանդէսը պիտի տեսէր մինչեւ կէս դիշեր, պիտի ըլլար վիճակահանութիւն, պիտի ըլլային ելեկտրական ճառեր. բարերարտարար այժմ մոռցեր են Դաշնակ, Մուսավաթ, Մէնշէլի անունները տալ՝ ամէն մէկ տողի վերջը. անոնք իրենց համար լուծարքի ենթարկուած են:

ԴԵՊԻ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ

Թէյշէրախնի կը կոչուի ուրարտական թագաւորութեան այն երեք բերդերէն մին, որ Երեւանի շրջանին մէջ կը գտնուին: Էրիքուլի (Երեւան) Արեւան բերդ պաշտպանողական օղակ մը ձգած էին հիւսիսային ազգերու դէմ՝ Քրիստոսէ 760 տարի առաջ:

Կ'ըսեն թէ Արգիստիս մեծն (785-753 Ն. Ք.) շինած ըլլայ կովկասեան ազգերուն դէմ. ի՞նչ ազգեր էին, վրացի, ոսէթ, ափսաղ՝ թէ լրնացի, ճընացի. ոչ ոք չիտէ: Հիմա Կարախի բլուր կը կոչուի՝ հողի գոյնին համար: Երեւանի մէկ արդարձանն եղած է, ցածկեկ տուններ իր ոտքերուն տակն են. ներդաղթողներու տուններն են եւ քահանայ մ'ալ ունին:

Մի՛ կարծէք թէ լեռ պիտի բարձրանանք. հողէ բլրակ մը, թիկունքը Հրազդանին տուած, եւ առջեւը դիւղաւանի մը աւերակները փռուած: Այժմ անոր փորը վիրարոյժի պէս ճեղքած՝ պատառ պատառ ըրած են, սենեակներ գտեր են, դարեջուրի գործատուն, մառան եւ խեցիէ բազմաթիւ մանր կճուճներ, հսկայ կարաններ, միջակ սափորներ, կարմիր հողէ թրծուած, մեծ մասով անգարդ, ու մանց վրայ թեթեւ ծով մը՝ լողացող երկու կարապներով, ողորկ եւ մաքուր շինուած: Պեղումներ կատարող ուսուցիչները մաս մը Էրմիթաժ գրկեր է, հատ մը Նեկուսին տուեր են. Երեւանի թանգարանը լեցուցեր են եւ դեռ շուրջ 1700 կտոր՝ Կարմիր բլրան մօտ առժամանակեայ շէնքի մը տակ ամփոփեր են: Իրա-

րու մօտ բերեր են խեցիէ եւ պղնձէ դարդեր, ուլունքներ, անոթաճ հատիկներ, զէնքի փշրանքներ: Բայց դեռ պեղումները չեն վերջացած. ո՛վ զիտէ ինչե՞ր կըրնան լոյսին գալ. պիտի պեղեն նաեւ տափարակի վրայ փռուած հին ուրարտական աւանը:

Ուրարտացիները պէտք է ուրախ եւ խրճող ժողովուրդ եղած ըլլան, որ այնքան հոգ տարեր են դարեջուր պատրաստելու. անշուշտ զինի ալ ունէին եւ ասիկա կրնայ լաւ փաստ մը ծառայել թէ վրացիներու նախահայրերն էին: Չեմ գիտեր թէ այսօրուան դարեջուրն ունէին՝ թէ դարեջուրի կը հանէին, ինչպէս ներկայիս Հայաստանի ինչ ինչ տեղեր կը գործածեն. բայց այս որոշ է՝ թէ բերդակալ վանքիները թէ՛ կը խմէին եւ թէ՛ կը պատե-րազմէին հերոսորդը:

Կարաններ տեսայ մարդահասակ եւ աւելի հաստափոր, որոնք 1375 լիտր դարեջուր կը պարունակեն, թաղուած եւ անեղծ մնացած մառաններու մէջ (այժմ տեղահան եղած):

Հրազդանի աջին, բլուրի հանդիպակաց կողմը, կը տեսնուէր խոշոր բացուածք մը, քարայր պիտի կարծուէր, մինչ Արգիստիս շինած ջրմուղին բերանն էր: 50 մղոն երկարութեամբ փաղուղի մը ջուրը կը տանէր Արմաւիր: Ուրարտացիները եղած է շինարար, այգեսէր եւ մարտնչող: Եթէ այս հեռաւոր վայրերուն այնքան հոգ տարած էին այգիներով եւ քաղաքներով պճնելու, ջրմուղներ բանալու, իրաւունք ունէր Ռուսաստանի յաղթող Նիկոլէի կայսրը Սարգոն Բ. (722-705) ըսելու. Զքրանցքներ բացուած էին եւ ջուրերը ցաղկելով կը վազէին Եփրատի նման: Անքիւ առուակներ կը ջրէին դաշտերը եւ խաղողն ու պտուղները անձրեւի պէս կը բափէին: Զքրանցքներու վրայ շինուած էր արքայական պալատը եւ քաղաքները հարստութեան մէջ կը լողային:

Անգամ մը եւս պէտք է կրկնել՝ թէ Հայաստան համայնավար երկիրներու միակ թանգարանն է:

(Շարունակելի)



ԾԱՐԱՍՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԱՐԱՐԱԿԱՆ ԶԱՅՆԱԳՐԱԴԱՐԱՆ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

Հ. ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՏԱՅԵԱՆ

ՀԱՏՈՐ Բ.

Աստուածածնի տօներ - Միտունդ - Յայտնութիւն, հանդերձ ութօրէքով - Աւագ տօներ - Առաքելոց, ՀԲ. աշակերտաց - Յովնանու մարդարէին

Մեծադիր, էջ 436

1960

Գին՝ 27 տոլար

ՀԱՏՈՐ Դ.

ՂԱԶԱՐՈՒ ՅԱՐՈՒԹԵՆԷՆ - ԶԱՏԻԿ

Մեծադիր, էջ 414

1954

Գին՝ 25 տոլար

ՀԱՏՈՐ Ե.

ԶԱՏԻԿԷՆ - ՀՈԳԵԳԱՆՈՒՍ

Մեծադիր, էջ 558

1957

Գին՝ 31 տոլար

ԸՆԴԱՐՈՒՄ

ՀԱՏՈՐ Գ.

Որ պիտի պարունակէ

Ս. Սարգսի

եւ Մեծ-Պահլի

բոլոր Շարականները,

Բուն Բարեկենդանէն

մինչեւ

Ղազարու Յարութիւն,

բաժնուած

վեց պրակներու

Գինը ուղղակի հեղինակին.

P. Léonce Dayan - VENISE (Italie)